

**Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի նիստի**

**Մասնակցում էին՝** հանձնաժողովի 29 անդամներից 20-ը

**Հրավիրված էին՝** ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի Հաշվառումների բյուրոյի փորձագետներ՝ տիկ. Միտալի Սենը, տիկ. Սասկիա Դեվրիզը և պ-ն Դերեկ Ազարը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ Գ.Հայրապետյանը, Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի ներկայացուցիչ, մարդահամարի հարցերը համակարգող Ա. Հովհաննիսյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչությունից՝ Վ. Գևորգյանը և Է. Սանամյանը:

**Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.**

1. ՀՀ 2011 թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքն ամփոփված 02.09.2011թ. դրությամբ:
2. Այլ հարցեր:

**Բացման խոսքով** հանդես եկավ նիստը նախագահող՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ **պրն. Ա. Գևորգյանը**: Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին և առաջարկեց հաստատել ՀՀ ԱՎԾ ներկայացրած օրակարգի նախագիծը, եթե առարկություններ չկան: Այլ առաջարկություններ չեղան և օրակարգը հաստատվեց: Օրակարգի առաջին հարցը ներկայացնելու համար նա խոսքը տվեց հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Կույումջյանին:

**Կ. Կույումջյանը** - ներկայացրեց 2011թ. սեպտեմբերի 2-ի դրությամբ իրականացված ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման ու անցկացման գործառույթների կանոնակարգման և իրականացման համար անհրաժեշտ մեթոդական և հրահանգչական փաստաթղթերի հաստատման և տպագրության, սխեմատիկ հատակագծերի հիման վրա քաղաքներում և 5000 ու ավել բնակչություն ունեցող գյուղերում տների/շինությունների ցուցակների կազմման ընթացքի, բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ՝ «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթերի լրացման գործընթացի, ինչպես նաև ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների աշխատանքներին մասնակցելու նպատակով ՀՀ ԱՎԾ նախագահի մարզային այցելությունների վերաբերյալ: Ներկայացրեց նաև մարդահամարի նախապատրաստման և անցկացման նպատակով անհրաժեշտ ժամանակավոր ներգրավվելիք աշխատողների քանակակազմերը, մարդահամարի

և հրահանգչական տեղամասերի համար տեղերում ժամանակավոր աշխատասենյակների տրամադրման անհրաժեշտ քանակների և ժամկետների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն (զեկույցի համակարգչային ներկայացմամբ համառոտագիրը՝ 12 պատկեր, կցվում են):

**Ա.Գևորգյանը** – առաջարկեց պարզաբանել ներկայացմանն առնչվող հետևյալ հարցերը.

- Արդյոք մարդահամարի հարցաթերթը հաստատված է և հասանելի է:
- Որքանով են ապահովված մարդահամարի ժամանակավոր աշխատակազմերի թեկնածուները:
- Մարդահամարի քարոզչական ինչպիսի միջոցառումներ են իրականացվելու:

**Կ.Կույումջյանը – 1-ին հարցի կապակցությամբ** պարզաբանեց, որ ՀՀ կառավարության որոշմամբ մարդահամարի ծրագրի հաստատումից հետո (12.05.2011թ. թիվ 674-Ն) մարդահամարի հարցաթերթը հաստատվել է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ (09.07.2011թ., թիվ 34-Ա) և հասանելի է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք էջի «Մարդահամար-2011» խորագրի ներքո:

**Ա. Մնացականյանը – 2-րդ հարցի կապակցությամբ** նշեց, որ մարդահամարի դաշտային աշխատանքների իրականացման նպատակով, ներկա պահի տեղեկատվությամբ, ապահովված են մարդահամարի նպատակով ժամանակավոր ներգրավվելիք աշխատակազմի թեկնածուների շուրջ 80 տոկոսը, քանի որ ինչպես ներկայացմամբ հիշատակվեց, հաշվարարների ընտրության հարցով Ա.Մնացականյանը խնդրանքով դիմել էր ՀՀ բոլոր համայնքների ղեկավարներին՝ մինչև ս. թ. սեպտեմբերի 10-ը, ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ ներկայացնել հաշվարարների թեկնածուներ՝ համայնքների բնակիչներից և այդ աշխատանքներն իրականացվում են նրանց հետ համագործակցված:

**3-րդ հարցի կապակցությամբ**, նախ ներկայացրեց նիստին հրավիրված ԱՄՆ հաշվառումների բյուրոյի փորձագետներին, որոնց աջակցությամբ ձեռնարկվել են մարդահամարի իրազեկման հետևյալ գործառույթները.

- Նախապատրաստվել են պարոն Գևորգյանի անունից գրություններ ուղղված ՀՀ-ում գործող բջջային 3 օպերատորներին՝ առաջարկությամբ համագործակցել ՀՀ ԱՎԾ հետ մարդահամարի քարոզչական գործընթացների իրականացման գործում և աջակցել՝ մարդահամարի նախօրեին ու մարդահամարի անցկացման 10 օրերի ընթացքում իրենց բաժանորդներին առաջարկված բովանդակությամբ հաղորդագրություններ (sms) ուղարկելու հարցում:
- Նախապատրաստվել են համապատասխան ուղեցույցներ մարդահամարի ուղերձները ուսուցիչների միջոցով հանդեսների, դասարանային խաղերի և մրցույթների ձևով հասցնել աշակերտներին, իսկ նրանց միջոցով՝ նաև ընտանիքներին: Այդ կապակցությամբ բանակցել ենք ՀՀ կրթության նախարարի հետ և նախապատրաստվել է ծրագրի պաշտոնական գրությամբ ձևակերպումը:
- Մարդահամարի ուղերձը բնակչության նախատեսվում է փոխանցել նաև ՀՀ-ում գործող բանկային համակարգի միջոցով, ինչի համար համաձայնություն է ձեռք բերվել վարվել ոլորտի պատասխանատուների հետ:

Իրազեկման գործառույթների շրջանակում նախատեսված է նաև մարդահամարի վերաբերյալ՝ պատաստի ու գրքույկի տպագրություն, տեսահոլովակի պատրաստում և ցուցադրում հանրապետական սփռմամբ հետուստապիքներով, գովազդային վահանակների տեղադրում Երևանում և դեպի մարզեր ուղղորդող մայրուղիներում:

**Ա.Գևորգյանը** – առաջարկեց աշխատանքները կազմակերպել այնպես, որ գովազդը հեռարձակվի, առնվազն հոկտեմբերի 5-ից:

Քանի որ նույն օրը ՀՀ փոխվարչապետը հանդիպում ուներ ՀՀ մարզպետների հետ, առաջարկեց պ-ն Ա.Մնացականյանին ներկայացնել, թե մարդահամարի

նախապատրաստական աշխատանքներից նրանց ներկայացնելու և քննարկելու ինչպիսի հարցեր են մնացել:

**Ա.Մնացականյանը** -խնդրեց մարզպետների հետ հանդիպմանը մեկ անգամ ևս արժարժել համայնքներում հասցեային տնտեսության կարգավորման հարցը, չնայած որ այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ արդեն իրագործված են, ինչպես նաև առաջարկեց մարզպետներին հայտնել դպրոցներում նախատեսվող մարդահամարի իրազեկման նախաձեռնության մասին:

**Ա.Գևորգյանը** – առաջարկեց նիստին ներկայացված տեղեկատվական պատկերները տեղադրել կայք էջերում: Նշեց, որ հաջորդ նիստը տեղի կունենա հոկտեմբերի սկզբին, որպեսզի մարդահամարի նախօրեին հանձնաժողովի անդամները տեղեկանան մարդահամարի գործառույթների պատրաստվածության վիճակի մասին:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**ՀՀ փոխվարչապետ,**

**ՀՀ տարածքային կառավարման նախարար**

**Ա.Գևորգյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝**

**ՀՀ ազգային վիճակագրական ծառայության**

**աշխատակազմի մարդահամարի և**

**ժողովրդագրության բաժնի պետ**

**Կ. Կույումջյան**